«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Հաստատություն՝ 154 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Մագդա Մանուկյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը 4

Հայրենաճանաչողությունը նախադպրոցական տարիքում 5

Օրինակելի պարապմունքի պլան 9

Նկարաշար 13

Եզրակացություն 15

Գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հողը մի կենդանի էակ է, նա ունի իր հոգին, և առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի, մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին:

Մարտիրոս Սարյան

Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

Գարեգին Նժդեհ

«Հայրենաճանաչողություն» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչողությունից: Հայրենաճանաչողություն դաստիարակելը այսօրվա կարևորագույն խնդիրներից է: Եթե չլիներ հայրենասիրությունը, ազգային արժանապատվությունը գիտակցելու կարողությունը, ապա մենք կկորցնենք այն ինչ ունենք: Հայրենիքն այն թանկարժեքն տարածքն է, որի համար իրենց կյանքն են զոհել շատ հայորդիներ: Ուստի մենք պարտավոր ենք այն ամբողջական պահպանել և փոխանցել հաջորդ սերունդներին: Սերմանելով սեր հայրենիքի, քաղաքի, հայրենի բնության հանդեպ, ծանոթացնելով երկրի մշակույթին և պատմությանը՝ յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իր շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ: Հայրենաճանաչողությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է: Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտանիքում և մանկապարտեզում: Այս թեմային անդրադարձ կատարելով՝ նպատակ ունեմ “հայրենաճանաչողության” գաղափարն ավելի արտահայտելու և այն գործնականում կիրառելու, որպեսզի հենց այս տարիքի երեխաներից սկսած հասկանան “հայրենիք” բառի արժեքն ու գաղափարը:

Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում երեխաների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները երեխաների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրությունն է, որը նախադպրոցական ուսումնական հաստատությունում լավագույն կերպով մատուցվում է թեմատիկ պարապմունքների ժամանակ: Այն մեծագույն արժեք է, որը հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր մանկավարժ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունենք հատկապես մենք՝ դաստիարակներս՝ մեր գերնպատակը դարձնելով բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ կերտելը: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Հայրենաճանաչողությունը նախադպրոցական տարիքում

Մանկավարժի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Մեր խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ուստի 21-րդ դարի երեխայի դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձր արժեքներին երեխաներին ծանոթացնելը: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից սերնդին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Նախադպրոցական տարիքն առաջին օղակն է կրթության համակարգում, ուստի այն ամենից խոցելին է, քանի որ այս տարիքում երեխայի անձի ձևավորման խնդիրն է դրված և հետևաբար յուրաքանչյուր մոտեցում պետք է ունենա հստակ նպատակ: «Հայրենիք» բառի նշանակությունն ու գաղափարն անհրաժեշտ է սերմանել երեխայի մեջ վաղ տարիքից: Երբ փոքրիկը կարողանում է տարբերակել տունը, մայրիկին, հայրիկին, տատիկին, պապիկին, պետք է խնամքով այս «հատուկ մանկական համակարգի» մեջ մտցնել նաև «հայրենիք» բառը: «Առաջին հերթին երեխայի համար հայրենիքի մոդել է տունը: Տունը հայրենիքի մի մասն է: Եթե նա այնտեղ ստանում է ջերմություն, սեր, դաստիարակություն և զգում է իրեն ազատ, ապա նա ավելի շուտ կարող է հասկանալ, որ իր մեծ տունը իր հայրենիքն է, իսկ իր մեծ ընտանիքը՝ ընկերները, ուսուցիչները, բոլո՛ր-բոլո՛րը», - ասում է հոգեբան Իրինա Բաղդասարյանը:

Հիմնական ինֆորմացիան երեխաները ստանում են երեք տարեկանից: Այս ժամանակահատվածում հատկապես պետք է ուշադրություն դարձնել դաստիարակությանը: Ըստ հոգեբանի՝ երեխային դեպի «հայրենիք» բառի գիտակցումը տանելու ուղին հեշտ է, պարզապես այդ ընկալումը պետք է ունենան նաև ծնողները: «Հաճախակի կրկնեք մեր Հայաստանը, քո քաղաքը, քո փողոցը, մեր փողոցը, քո տունը, մեր տունը, մեր քաջ զինվորները, մեր բանակը, քո բանակը …: Երգե՛ք… հայրենասիրական երգերն իսկապես մտնում են երեխայի ենթագիտակցության մեջ և հետագայում ամրանում որպես հաստատուն գաղափար: Արմատացրեք բառը՝ հայրենիք, Հայաստան և հետագայում մեխանիկորեն կրկնվող բառերն ու վերաբերմունքը կվերափոխվեն «գիտակից ընկալման»: Նմանատիպ հոգեբանական խաղերի միջոցով պետք է արմատացնել հայրենիքին նվիրվածության գաղափարը երեխաների մոտ», - ասում է Իրինա Բաղդասարյանը:

Փոքրիկի հաջողության գրավականներից մեկը այն է, երբ նա շրջապատված է առողջ գաղափարներով և դաստիարակությամբ: Նա գիտի սիրել իր հայրենիքը, իր արևը, իր տունը, պարզապես պետք է սովորեցնել նրան: Նա ինքնաբերաբար կկատարի «իր պաշտոնը»՝ մեծահասակներից առավել լավ:

Նախադպրոցական երեխայի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ նրա արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է երեխայի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, խաղի ընթացքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից երեխաների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է: Երեխայի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Երեխան նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Բացասական մոդելները հակում

ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ երեխայի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի նաև միջամտություն: Երեխայի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև երեխաների համար խաղից բացի ուսուցումը գործունեության մեկ այլ տեսակ է, որը կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Նախադպրոցական տարիքի երեխան չափից դուրս հարցասեր է, քանի որ այս տարիքում երեխան նոր սկսում է ճանաչել աշխարհը, ինքնաարտահայտվել, ծանոթանալ իր համար նոր հասկացություններին, և դրանց նշանակությանը: Այդպիսի կարևոր գաղափարներ են «Հայրենիք», «Հայրենի հող», «Հայ մեծեր», «Մեր մայրաքաղաքը», «Հայաստանի բնաշխարհը» և այլն: Այս ամենն ավելի ընկալելի է դառնում հատկապես 5-6 տարեկան երեխաների շրջանում: Յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ դաստիարակը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ պարապմունքի թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են թեմատիկ ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին երեխաների մոտ հաճախակի են դրսևորվում: Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում երեխաների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ երեխաները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց, սովորում են կոլեկտիվ աշխատել և այլն:

Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժը հայրենաճանաչողության պարապմունքներն անցկացնելով նպատակ պետք է ունենա.

1. Դաստիարակել խորը հայրենասիրություն:

2. Ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խորը զգացում:
3. Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:
4. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհին ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:
5. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

Հայրենաճանաչողությանը նվիրված բազում պարապմունքներ եմ անցկացրել: Ստորև ներկայացնում եմ օրինակելի պարապմունքի պլան:

Օրինակելի պարապմունքի պլան

Թեմա՝ “Հայաստանն իմ տունն է”

Նպատակը՝

Կրթական – Հստակեցնել և ամրակայել երեխաների գիտելիքները՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ: Ծանոթացնել երկրի դրոշին, զինանշանին, օրհներգին, Երևանի տեսարժան վայրերին, հուշարձաններին:

Դաստիարակչական – Արթնացնել հայրենասիրական զգացումներ և հետաքրքրություն Հայաստանի անցյալի և ներկայի նկատմամբ, ինչպես նաև գիտակցական վերաբերմունք ձևավորել հայրենիքի զգացողությունն ամուր պահելու առումով:

Զարգացնող - Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, ամրապնդել հիշողությունը, խմբով աշխատելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ՝

ՀՀ դրոշ, զինանշան, նկարներ, ձայնասկավառակ, նկարչական պարագաներ:

Նախապատրաստական աշխատանք՝

Կազմակերպել էքսկուրսիա դեպի Երևանի տեսարժան վայրեր: Սովորեցնել բանաստեղծություններ, երգեր, պարեր:

Ընթացքը.

Հայրենիք (*հեղ.**Սարմեն***)

Մեր մեծ հայրենիք,
Ի՞նչ կա աշխարհում
Քեզնից անառիկ
Ու քեզնից սիրուն:
Սարե՛րդ՝ բարձրիկ,
Դաշտե՛րդ՝ անծայր
Ջրերդ քաղցրիկ,
Արևդ պայծառ:

Դու տվել ես մեզ
Ծաղիկ ու ծիծաղ,
Երգ, մանկապարտեզ,
Թե ուսում, թե խաղ:
Դու տվել ես մեզ
Թռիչքի թևեր,
Որ բարձրանանք մենք
Աստղերից էլ վեր:

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ:

Զրույցի մոտավոր բովանդակությունը:

-Ինչի՞ մասին է պատմում հեղինակը բանաստեղծության մեջ /օգտվել տեքստի բառերից և արտահայտություններից/:

-Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար /երեխաների ազատ արտահայտվելը/:

-Ինչպե՞ս են անվանում մեր հանրապետությունը /Հայաստանի Հանրապետություն/: Քարտեզի վրա ցույց տվեք մեր հայրենիքը: /Դաստիարակը բաց է անում աշխարհագրական քարտեզը և ցույց է տալիս երեխաներին/:

-Ուշադի՛ր դիտեք քարտեզը և որոշե՛ք՝ ո՞ր գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում /քննարկել, թե որ գույնն ինչ է նշանակում/:

-Ինչո՞վ է հարուստ մեր երկիրը:

Օգտվելով աշխարհագրական քարտեզից՝ երեխաներին օգնել, որ նրանք պատմություն հյուսեն ՀՀ տարածքի և նրա հարստության մասին:

<u>Դաստիարակ.</u>

-Երեխանե՛ր, յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ, իրեն բնորոշ նշան՝ դրոշը, զինանշանը և հիմնը:

-Երեխանե՛ր, դուք հաճախակի եք լսում՝ «Կարմիր, կապույտ, ծիրանագույն» երգը: Եկեք մեկ անգամ էլ լսենք այն /միացնել երգի ձայնագրությունը և միաժամանակ ներկայացնել Հայաստանի դրոշը/: Երեխաներին ոգևորելու համար կարելի է նրանց բաժանել փոքրիկ եռագույն դրոշներ:

-Սա մեր պետական դրոշն է՝ եռագույնը: Ինչո՞ւ են հատկապես այդ գույներն ընտրված մեր դրոշի համար:

-Ի՞նչն է լինում կարմիր գույնի /արևը, կակաչները, արյունը, ուրախությունը. Հաղթանակը/:

-Ի՞նչն է կապույտ /գետերը, լճերը, երկինքը, զանգակածաղիկները/:

-Ի՞նչն է լինում ծիրանագույն /ցորենի հասկը, ծիրանը, լեռները աշնանը, այդ գույնը տարածված է մեր Հայաստանի բնության մեջ, և խորհրդանշում է մեր ժողովրդի ստեղծագործ աշխատանքը/:

Պատասխանները լսելուց հետո, դաստիարակը ընդհանրացնում է միտքը և ավելացնում, թե որ դեպքում են բարձրացնում ՀՀ դրոշը: Ասում է, որ դրոշներով զարդարում են փողոցները, հրապարակները ... ՀՀ տոնակատարությունները նշելիս, դրանք զարդարում են մեր երկիրը:

Դաստիարակը երեխաներին ցույց է տալիս ՀՀ զինանշանը: Հարկավոր է պատմել, որ զինանշանի վրա պատկերված են այն խորհրդանիշները, ինչով հայտնի է մեր երկիրը: Մեր ժողովուրդը թագավորների, զորավարների գլխավորությամբ պաշտպանել է մեր հայրենիքը թշնամիներից: Հայաստանի զինանշանի վրա պատկերված են արծիվն ու առյուծը, որոնց գլուխները նայում են տարբեր կողմեր: Այդ կենդանիներն առանձնանում են իրենց ուժով, խելքով, գեղեցկությամբ և խորհրդանշում են ուժ, աշխատանք, գեղեցկություն:

Բանաստեղծության ունկնդրում.

Մեր զինանշանը (*հեղ.**Էլ. Մկրտչյան***)

Ահա՝ զինանշանը՝
Գրավիչ է ու պերճ,
Ի՞նչ հմայք է պահել իր մեջ,
Որ վեհորեն շողում է միշտ՝
Որպես ուժի,
Աշխատանքի,
Խաղաղության
Խորհրդանիշ:

Մեր Հանրապետությունն ունի իր պետական երգ հիմնը՝ օրհներգը: Դա հատուկ, հանդիսավոր երգ է: Երբ այն հնչում է, բոլորը պետք է ոտքի կանգնեն /դաստիարակը միացնում է ՀՀ հանրապետության հիմնը: Լսել առաջին մասը/: Երբ մրցում են տարբեր երկրների մարզիկները, հաղթողի պատվին հնչում է իր երկրի հիմնը: Դաստիարակը միացնում է հիմնը և հիշեցնում, թե ինչպես պետք է պահեն իրենց հիմնը լսելիս /լռությամբ հոտնկայս լսեն/:

<u>Դաստիարակ.</u>

- Երեխանե՛ր, պատմե՛ք՝ ինչ եք զգում երգը լսելիս /կարևորություն, հպարտություն, հիացմունք, հուզմունք .../

Ֆիզկուլտ դադար՝ «Շոգեքարշ շարժվիր»

Կատարել տեքստին համապատասխան շարժումներ:

Հնչեցրու զանգը, Ավե՛տ,
Խաղը սկսենք ինսկույնևեթ:
Ով ուզում է դառնալ վագոն,
Թող պահպանի կարգ ու կանոն
Կպչենք դո՛ւ ինձ, ես՝ նրան,
Շարժվենք դեպի Երևան:

Երեխաները միմյանց հետևից, ձեռքերը պտուտաձև շարժելով՝ դանդաղ քայլում են առաջ, ասելով ՝ «տու՛-տա՛-տու՛- տա՛...», ապա արագացնում են ընթացքը՝ արտասանելով «չը՛ք-չա՛ք-չը՛ք-չա՛ք...»: Հասնելով կայարան /աթոռակներին/՝ երեխաները դանդաղեցնում են ձեռքի շարժումները և իջեցնում ձայները «չու՛-չու՛-չու՛»:

<u>Դաստիարակ.</u>

-Մեր երկրում բնակվող բոլոր մարդիկ նշում են ՀՀ տոները: Որո՞նք են դրանք /ՀՀ ստեղծման օրը, ՀՀ անկախության հռչակման օրը, Հայոց բանակի օրը, մայրաքաղաքի օրը.../:

-Ինչո՞ւ ենք հայրենիք անվանում այն վայրը, ուր ծնվել ենք մենք, մեր պապերն ու նրանց ծնողները:

-Ի՞նչ լեզվով են խոսում Հայաստանում ապրող մարդիկ:

-Ինչպե՞ս են անվանում մարդկանց, ովքեր ապրում են Հայաստանում /հայաստանցի/:

<u>Դաստիարակ.</u>

Մեր հայրենիքը Հայաստանն է:

Հայաստանի աշխարհն առատ է Սևանա լճի ջրերով, Բյուրականի, Ապարանի անուշահամ, սառնորակ և քաղցրահամ աղբյուրներով, Արզնու, Ջերմուկի, Հանքավանի հանքային ջրերով, Արարատյան դաշտավայրի փարթամ արոտավայրերով և լայնարձակ դաշտերով: Բնության զարդն է երկարասլաց Մասիսն ու քառագագաթ Արագածը: Բացի Հայաստանից շատ ուրիշ պետություններ կան, սակայն մարդը մեկ մայր ունի, մեկն է նաև իր հայրենիքը:

Պարապմունքից անմիջապես հետո անցկացրեցի խմբային այլընտրանքային նկարաչություն ձեռքերի և ուրվագծված պատկերների միջոցով (*տեսնել «Նկարաշար»-ում*):

Նկարաշար

Այս պարապմունքը բացառություն չի: Մեկ անգամ չէ որ իմ կողմից անցկացվել են նմանատիպ օրինակելի պարապմունքներ և բազմաթիվ միջոցառումներ նվիրված հայրենիքին, հայրենասիրությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրությունն առաջին հերթին հայրենաճանաչողություն է, երբ գիտենք մեր բնակավայրերը, որոնք մեզ համար լոկ քարտեզի կետեր չեն և ուղղակի բառեր: Դրանք հարազատ միջավայրեր են, որտեղ մենք ընկերներ և պատմություն ունենք, որտեղ եղել են մեր կյանքի հիշարժան իրադարձությունները և այս պարագայում դա իրոք դառնում է այն հայրենիքը, որը մեր սրտում է և որը սիրելու համար մեզ հատուկ բառեր ու դասեր պետք չեն:

Իմ կարծիքով յուրաքանչյուր ոք պիտի լինի հայրենասեր և ամեն մարդ պետք է լինի պաշտպան հայրենի հողին: Հայրենասիրությունը մարդուն դարձնում է համարձակ և վճռական: Երբ հայրենիքը վտանգված է, պետք է գիտակցել, որ անձնական պատասխանատվություն ենք կրում այն ամենի ինչում, ինչ կատարվում է երկրում: Մեր ժողովուրդը իր գոյության բազում դարերի ընթացքում ունեցել է այնպիսի զավակներ, որոնք պատրաստ են եղել զոհաբերել անգամ ամենաթանկը՝ կյանքը:

Հայրենաճանաչողության ձևավորումը ժամանակակից կրթօջախների գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր երեխայի մեջ հայրենասիրությունը պետք է արմատանա դեռ մանուկ հասակից: Այն նվիրական զգացում է, արժանապատվություն: Հայրենաճանաչողությունը հողին կապնվելն է: Հայրենաճանաչողությունը սերն առ հայրենիք, սերն է առ Աստված, սերն է դեպի մեր հայոց գրերը, սերն է դեպի մեր եկեղեցիները և մեր հավատը: Հայրենաճանաչողությունը բարու և գեղեցիկի դրսևորումն է դեպի երկիրը, դեպի ծնողն ու զավակը: Այն փառավոր հատկանիշ է:

Եվ ես իմ բոլոր պարապմունքներում ներառելով հայրենաճանաչողության թեման, անդրադառնալով հայրենիքի գաղափարին, ցանկանում եմ այս սերունդների մտածողության հիմքում դնել հայրենիքը՝ որպես բացարձակ արժեք լինելու գաղափար և մատաղ սերունդներին կրթել ու դաստիարակել հենց այս նվիրական ոգով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր» /5-6 տարեկաններ/
2. Ա.Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002
3. Մայրենի լեզվի պարապմունքները ավագ խմբում, 2011
4. Նախաշավիղ